

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2014թ. նոյեմբերի 3-6-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հյուսիս – արևմտյան սևծովյան ավազանի մակերևութային ջրային ռեսուրսների ֆիզիկո-քիմիական և կենսաբանական ցուցանիշների հետ կապված բարձրորակ հետազոտական նախաձեռնություններ» խորագրով սեմինար-թրեյնինգին,
- ✓ 2014թ. նոյեմբերի 14-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ջ. Ավոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանից աշխատանքային միգրացիայի շրջափուլի բարելավում» կլոր սեղան քննարկումներին,
- ✓ 2014թ. նոյեմբերի 14-15-ը ՀՀ ԱՎԾ թվով 34 աշխատակից մասնակցել են գ. Արզականում (Ադվերան) կայացած «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման դաշտային աշխատանքների ամփոփում», «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հետհաշվային ստուգման աշխատանքներ իրականացման մեթոդաբանություն» խորագրերով սեմինար-խորհրդակցությանը,
- ✓ 2014թ. նոյեմբերի 14-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանում նորարարության իրականացման ակնարկ», խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2014թ. նոյեմբերի 17-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած «2014թ. աղքատության գնահատում», «2014թ. զենդերային գնահատում» խորագրով Համաշխարհային բանկի հաշվետվությունների քննարկմանը,
- ✓ 2014թ. նոյեմբերի 27-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Թուրինի գործընթաց - 2014» խորագրով սեմինարին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 5-7-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի արտագնա նիստին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը,

տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը, շինարարության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Լ. Պարոնյանը և տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանի ազգային էներգոհաշվեկշռի և էներգետիկայի և առնչվող ոլորտներում մոնիթորինգի, հաշվետվողականության և ճշգրտումների (MRV) գործունեությունների հետ կապված արդյունքների և առաջարկությունների վերանայման ու քննարկման վերաբերյալ վերջնական աշխատանքային հանդիպմանը,

- ✓ 2014թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ԹՎԻՆԻՆԳ II ծրագրի առաջարկների ներկայացում» խորագրով հանդիպմանը,
- ✓ 2014 թ. դեկտեմբերի 1-12-ը ՀՀ ԱՎԾ թվով 15 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Ժողովրդագրական վերլուծություններ» խորագրով սեմինարին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 10-12-ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ «ՊՎՏՀ» ծրագրի բնապահպանության վիճակագրության ոլորտի մուտքագրող օպերատոր Ա. Պողոպոմոզովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանի երկամյա առաջընթացի առաջին զեկույց ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիային» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի շրջանակներում ջերմոցային գազերի մեղմման գործողությունների մշակման նպատակով նախատեսվում է իրականացնել տնային տնտեսություններում էներգիայի սպառման կառուցվածքի ուսումնասիրություն» խորագրով կլոր սեղանին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ողջիի և Մեղրի գետի գետավազանային կառավարման պլանների նախագծերի ներկայացում շահագրգիռ կողմերին» խորագրով հանդիպմանը,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Օբոյանցը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստան – էլեկտրոնային

կառավարման համակարգային զարգացում» Էլ.-Հայաստան ծրագրի ավարտական շնորհանդեսին,

- ✓ 2014թ. դեկտեմբերի 16-17-ը ՀՀ ԱՎԾ թվով 14 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանում ձեռնարկատիրական վիճակագրության զարգացումն ըստ գենդերի» խորագրով սեմինարին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը և ՀՀ ԱՎԾ վիճակագրության տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Սուշեդյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Պետական կայքերի բովանդակության ստանդարտացումը և տեղեկատվական բացերը» եռալեզու գրքի շնորհանդեսին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Աղտոտման համալիր կանխարգելման և հսկման (ԱՀԿՀ/IPPC) համակարգի ներդրման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության հզորությունների զարգացում» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի փակման արարողությանը,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը և Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի հանդիսավոր ընթրիքին՝ նվիրված «Երեխայի իրավունքների մասին» հռչակագրի 25 ամյակին և Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեության 20 ամյակին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» խորագրով հետազոտության արդյունքների ներկայացմանը: